«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով
պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս. Ավետիսյան

_____ «11» նոյեմբեր 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Աշխեն Մանվելի Սողոմոնյանի՝ «Տնտեսական ընկերությունների լուծարման իրական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» վերտառությամբ
ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք – (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. Թունյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Գ. Դավթյանի, ի.գ.թ., դոցենտ Յ.Վ. Հայրապետյանի, ի.գ.թ. Ե.Ռ. Նիկողոսյանի, ի.գ.թ. Ա.Ա. Մանուկյանի, ի.գ.թ. Կ.Մ. Հովհաննիսյանի, ի.գ.թ. Ա.Գ. Մալխասյանի, ի.գ.թ. Ե.Ռ. Դանիելյանի, ի.գ.թ. Ն.Գ. Դավթյանի, ի.գ.թ. ավագ դասախոս Մ.Ա. Քալաշյանի, ավագ դասախոս Օ.Ա. Հովհաննիսյանի, ամբիոնի լաբորանտ Ի.Վ. Խաչատրյանի քննարկեց Աշխեն Մանվելի Սողոմոնյանի՝ « Տնտեսական ընկերությունների լուծարման իրական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման ընթացակարգային խնդիրներին: Ատենախոսի կողմից փորձ է կատարվել մշակելու գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հանրապետությունում առաջին համապարփակ հետազոտությունը: Ասպիրանտի ատենախոսության ուսումնասիրության առարկան են ժամանակակից շուկայական տնտեսության շարժիչ ուժ հանդիսացող տնտեսաակա ընկերոությունների լուծարման իրավական կարգավորման ընթացակարգային հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Գրախոսվող աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է թե՛ քննարկվող ոլորտին առնչվող, օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում առկա հակասություններով, ոլորտում առկա օրենսդրական բացերով, թե՛ առանցքային հարցերի առնչությամբ քաղաքացիագետների, այդ թվում՝ այլ երկրների՝ ոլորտի մասնագետների մոտեցումներում առկա էական տարբերություններով:

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական ընկերությունների գործունեության, ինչպես նաև գործունեության դադարմանը վերաբերող ընթացակարգային հիմնախնդիրներն ունեն առանձնահատուկ նշանակություն: Հարկ է նկատել, որ քննարկվող ինստիտուտի կարևորությունը հատկապես ընդգծվում է՝ պայմանավորված նաև գործունեության դադարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարման և դրանով իսկ նրանց իրավունքների պատշաճ պաշտպանության մեխանիզմների մշակման առանցքում: Այսպիսով՝ տնտեսական ընկերություններին վերաբերող հիմնահարցերի կարևորությունը դարձել են տնտեսության շարժիչ ուժ: Ինստիտուտի կարևորությոննն աշխատանքի շրջանակներում դրսևորվում է հատկապես նրանով, որ այն քննարկվել է դրա պատմական զարգացման առանցքների դիտարկման ձևաչափում նույնպես:

Բացի այդ, քաղաքացիական շրջանառության պայմաններում գործարարական գործունեության, որպես տնտեսության զարգացման առանցքային հիմնաքարի, քննարկման ձևաչափում տնտեսական ընկերությունների լուծարմաան ընթացակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի հատուկ կարևորություն:

Վերոշարադրյալն, անկասկած, հաստատում է ներկայացված հետազոտության արդիականությունը:

Ասպիրանտի կողմից ստացված առավել էական գիտական արդյունքները, որոնք կանխորոշում են գիտական նորույթը: Ա. Մ. Սողոմոնյանի աշխատանքում ընդհանուր առմամբ պատշաճ կերպով հետազոտված են տնտեսական ընկերությունների լուծարման ընթացակարգային հիմնախնդիրները՝ դրանց շուրջ ծավալված տեսական և գործնական քննարկումների ձևաչափում: Ատենախոսի կողմից խնդրի շուրջ դիտարկումներն ու քննարկումներն իրականացվել են՝ հիմքում դնելով ինստիտուտի նաև պատմական զարգացման առանցքները, ինչն առավելագույն մակարդակում է ընդգծել աշխատանքի լուրջ տեսական և գործնական նշանակությունը:

Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրության համար հեղինակի կողմից հիմք են ընդունվել ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության, դատական պրակտիկայի ամփոփման նյութերի, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների, ընդհանուր և մայրցամաքային իրավական համակարգերի տարբեր երկրների դատական պրակտիկայի, օտարերկրյա գիտնականների կարծիքների համեմատական վերլուծությունները:

Գիտական դրույթների, հետևությունների և առաջարկությունների հիմնավորվածությունը և արժանահավատությունը: Ա. Մ. Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտական հետազոտություն: Ատենախոսության թեման, բովանդակությունը, նպատակը, խնդիրները տրամաբանորեն փոխհամաձայնեցված են: Գիտական նորույթ պարունակող դրույթների բովանդակությունը համապատասխանում է հայտարկված մասնագիտությանը: Աշխատանքում հեղինակին հաջողվել է զարգացնել տեսական դրույթներ և մշակել գործնական առաջարկներ՝ տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքների և մոտեցումների համադրման և ոլորտի գործնական կիրառման առանձնահատկությունների համադրման միջոցով:

Ասպիրանտի կողմից հետազոտության արդյունքում ստացված արդյունքների հիմնավորման նպատակով կիրառվել են ճիշտ գիտական մեթոդներ: Դրույթների և եզրակացությունների հիմնավորվածության բարձր մակարդակը հավաստվում է գրականության ցանկում աղբյուրների ծավալով, հետազոտության հիմնական դրույթները շարադրված են համապատասխան հրապարակումներում:

Ատենախոսության գիտական արդյունքները հիմնվում են պաշտոնական աղբյուրներից ստացված զգալի ծավալով տեղեկատվության վերլուծության վրա, ինչն էլ պայմանավորում է դրանց արժանահավատությունը:

Հեղինակային ըմբռնումը, հետևությունները և առաջարկությունները հիմնավոր են, ձևակերպված գիտական դրույթները՝ նոր:

Աշխատանքի ձևակերպմանը և բովանդակությանը ներկայացվող դիտողություններ: Չնայած Ա. Մ. Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության վերոնշյալ առավելություններին, աշխատանքում առկա են որոշակի բացթողումներ և վիճելի առաջարկություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հեղինակը պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում (էջեր 9, 40-41 և 155) առաջարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել լրացում՝ նոր՝ 62. 1 հոդվածով, որով կսահմանվի առանձին հասկացություն՝ նվիրված իրավաբանական անձի դադարանը: Ըստ այդմ, առաջարկվում է իրավաբանական անձի դադարումը սահմանել որպես փաստակազմ, որը կհանգեցնի այդ իրավաբանական անձի մասնակցությամբ առաջացած իրավահարաբերությունների դադարմանը՝ իրավունքների և պարտականությունների համընդհանուր իրավահաջորդության կարգով փոխանցմամբ կամ առանց դրա:

Հարկ ենք համարում ընդգծել, որ, ըստ մեզ, այն ըստ էության իրենում չի արտացոլում իրավաբանական անձի դադարմանը վերաբերող հստակ ինստիտուցիոնալ մեխանիզմ, քանի որ միախառնում է իրավաբանական անձի վերակազմակերպման և լուծարման ընթացակարգային մեխանիզմները՝ փորձելով դրանք ներկայացնել մեկ միասնական ամբողջությամբ: Կարծում ենք, դադարումը իրավահաջորդության թույլատրելիությամբ սահմանելը չի կարող արտացոլել իրերի իրական դրությունը և հանգեցնել ոլորտի առավել պատշաճ գործունեությանը նպաստելուն:

2. Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսության շրջանակներում (էջ 10, 155-157) առաջարկվում է քննարկել իրավաբանական անձանց կամավոր և հարկադիր լուծարման ինստիտուտներն առանձին առանձին նախատեսելու և դրանք առանձին իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտությունը:

Կարծում ենք, ներկայացված առաջարկությունը չի կարող ընդունելի համարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 67-րդ հոդվածով արդեն իսկ համապարփակ կարգավորման է ենթարկել իրավաբանական անձի լուծարման ընթացակարգերը, իսկ, առաջարկում ներկայացվածներն ըստ էության դրանց պարզ վերարտադրությունն են:

3. Ատենախոսի կողմից աշխատանքի եզրակացություններից թվով 17-րդ եզրակացությամբ փորձ է կատարվել ներկայացնելու ոլորտում, ըստ հեղինակի, ակա մի շարք խնդրահարույց հարցեր, մասնավորապես ուշադրությունը սևեռելով այն հարցի վրա, թե ինչպիսի իրավական հետևանքներ կարող են առաջանալ, եթե իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավբանական անձի հիմնադիրները կամ կանոնադրությամ դրա համար լիազորված իրավբանական անձի մարմինը չկատարեն Օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված՝ անհապաղ տեղեկացնելու

պարտավորությունը: Գտնելով, որ ոլորտում առկա է իրավական կարգավորման թերացում՝ կապված հոդվածով սահմանված տեղեկացման պարտավորության հետ՝ ատենախոսի կողմից առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված «անհապաղ» բառը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով՝ դրանով իսկ, ըստ հեղինակի, առավելագույն մակարդակում հրատապության հասցնելով առկա խնդրի լուծմանն ուղղված պրակտիկ քայլերի կատարումը:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ օրենքում օգտագործված բառի լեզվական մեկնաբանմանն ըստ Հրաչյա Աճառյանի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (Հրաչյա Աճառյան, Ժամանակակից հայոց լեզվի բացատրակա բառարան, Երևան, 1969), որտեղ «անհապաղ» բառը մեկնաբանվում է որպես «շուտափույթ», «իսկույն», «առանց հետաձգման»...: Կարծում ենք, նմանօրինակ եզրույթի փոխարեն հստակ ժամանակային խզում սահմանելն արդարացված չէ, քանզի օրենսդրությամբ արդեն իսկ օգտագործված եզրույթն արտացոլում է իրերի իրական դրությունը, իրենում պարունակում առկա խնդրի հրատապության աստիճանով պայմանավորված հարցին լուծում տալու հստակ և սեղմ ժամկետ:

4. Պաշտպանության ներկայացվող 3-րդ, 4-րդ և 5-րդ դրույթներն ունեն վերլուծական-ճանաչողական բնույթ: Դրանցում պարունակում են խնդիրների արտացոլում, ներկայացում, որոշակի վերլուծություն առանց հստակ լուծման մեխանիզմների ներկայացման: Մինչդեռ, կարծում ենք, ցանկացած խնդիր պետք է ունենա լուծման հստակ կամ մասնակի հստակությամբ ուրվագծված եղանակներ կամ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

Այնուհանդերձ, նշված թերությունները չեն անդրադառնում Ա. Մ. Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության ընդհանուր որակի վրա, իսկ ներկայացված դիտողությունները կրում են խորհրդատվական բնույթ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Ա. Մ. Սողոմոնյանի՝ «Տնտեսական ընկերությունների լուծարման իրական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» վերտառությամբ ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, լիովին համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 10-րդ կետով թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2021 թ. հունվարի 29-ի նիստում, արձանագրություն թիվ 8.

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ՝ **ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ**

Նիստի քարտուղար՝ **Ի.Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ **Ռ.Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ**